



**Հայ Օգնության Միության
Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղ**

Տոհմիկ Օր



Նուիրում՝

Հայաստանի Ա. Հանրապետության 100-ամեակին

Զօնում՝

Հայոց Թագաւորական Տոհմերուն

Ուրարտական, Արտաշէսեան, Արշակունեաց,
Բագրատունեաց և Կիլիկիոյ

1 Դեկտեմբեր, 2018

ԹՈՐՈՆԹՕ

ԱԶԳՈՒԿԻՆ

ՎԱՅՐԵՆՆԻԿԻՆ ՆԵՑ

ՎԱՅՐԵՆՆԻԿԻՆ

ՎԱՄԱՐ



«. . . Ազատութիւնը երբեք չի շնորհվի, նա կամ կը
խլվի քաջութիւնով, կամ կը վաստկվի ջանք ու ճիգով:
Շնորհած ազատութիւնը, ինչպէս եւ ժառանգութիւն
ստացած փողը, շատ վատ գնահատում է եւ շատ շուտ
կորցում է»:

Ռաֆայէլ Պարկանեան

«Գոյութիւն ունի մի ուժ, որ աշխարհի
զանազան ծայրերից կարող է միաւորել հայերին՝
հոգով, մտքով եւ արիւնով: Դա ազգային սէրն է:
Ով չի ճանաչում, չի կարող ճշմարիտ սիրել այն»:

Բաֆֆի

«Մեզ վարանումներ չեն հարկաւոր, այլ՝ հավատ,
Մեզ խօսքեր չեն հարկաւոր, այլ՝ գործեր,
Մեզ թերահաւատութիւն չէ հարկաւոր, այլ՝ եռանդ,
Մեզ տատանումներ չեն հարկաւոր,
այլ՝ վճռակամութիւն եւ յանդգնութիւն»:

Խրիմեան Հայրիկ



**«Արինից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկուած կտոր մի կապոյտ,
Հասուն հասկերի շող նարնջագոյն,
Եւ վեց դարերի խաւարի վրայ դրօշ Եռագոյն»:**

Աւղբանիկ Ծառուկեան



**«Արդեօք գալն է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք,
Գիմեն դէպ իրեանց սիրուն հայրենիք»:**

Բա.Ֆ.Ֆի

ՀԱՅԱՍՏԱՆ

*Խօսք՝ Հ. Միրզա-Վանանդեցի
Երաժշտ.՝ Գաբրիել Երանեանի*

Հայաստան, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս օրրան,
Դու եւ բնիկ իմ Հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ի վեհ անունդ սիրտ իմ, ճիշտ,
Ոգեորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ, ի քեզ, յոյս իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստա՞ն, անո՞ն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան Տապան,
Եզիտ եւ քեւ ապրեցաւ Նոյ,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Գեոք քաջատաջք աղենաբուղիք,
Զհողդ բարի առնեն յուրթի,
Քեւ՝ ապրին ես, քեւ միշտ ցնծամ,
Քեւ, քեւ պանծամ, փառք իմ միայն:
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Հայաստան, ծնող դիցազանց,
Եւ հրաշալեաց հանդիսարան.
Քո զեփիտին քաղցր եւ շնչին,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Զոր շնչեցին եւ զօրացան,
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զքեզ յիշեմ, զքեզ սիրեմ,
Զքեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստան, Հայաստան, Հայաստան:



AMBASSADOR OF THE REPUBLIC OF ARMENIA

Օտտավա, 01 նոյեմբերի 2018թ.

Սիրելի հայրենակիցներ,

Պատիվ ունեմ իմ և Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանության անունից շնորհավորել բոլորիս Առաջին Հանրապետության 100 ամյակի կապակցությամբ:

Առաջին Հանրապետությունը կարևորագույն դեր և մեծ նշանակություն է ունեցել հայոց պետականաշինության բազմադարյա պատմության համատեքստում:

Մեկ դար առաջ մեր նախնիները շրջեցին պատմության անիվը և աշխարհի քարտեզում իր ուրույն տեղն զբաղեցրեց հայոց պետությունը:

Մենք ապացուցեցինք ամբողջ աշխարհին, որ դարերով չարչարանք կրած և ցեղասպանության արդյունքում մազապուրծ եղած հայ ազգը վերականգնեց իր պետականությունը և շարունակեց այն ավանդույթները, որոնք հիմնադրվել էին Ուրարտական, Արտաշեսյան, Արշակունյաց և Կիլիկիայի հայոց թագավորական տոհմերի կողմից: Հայ ազգը վերահաստատեց նաև, որ նա ամրակուռ է և պատրաստ է դիմակայել բոլոր դժվարություններին ու մարտահրավերներին: Դրա վառ ապացույցն էին Ղարաքիլիսայի, Բաշ Ապարանի և հատկապես Սարդարապատի հերոսամարտերը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս այս մեծ տոնի կապակցությամբ և մաղթում նոր նվաճումներ ու ձեռքբերումներ՝ ի նպաստ հայ ժողովրդի:

Հարգանքով,

Լևոն Մարտիրոսյան



ԳԱՆԱՏԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN PRELACY OF CANADA
PRÉLATURE ARMÉNIENNE DU CANADA

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Դարձեալ ժամադրուած էք Հ.Օ.Մ.-ի «Ռուրիսա» մասնաճիղի կողմէ կազմակերպուած Տոհմիկ Օրուան տօնակատարութեան, որ այս տարի ձօնուած է Հայոց Թագաւորական Տոհմերուն՝ Ուրարտական, Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց եւ Կիլիկիոյ եւ նուիրուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին:

Տոհմիկ օրուան տօնակատարութիւնը նուիրուած Պատմական Հայաստանի Հայոց Թագաւորական Տոհմերուն, առիթ մըն է, անդրադառնալու մեր անցեալին, իրաքանչիւր Տոհմի ունեցած դերակատարութեան եւ նպաստին, ծանօթանալու Արքայական սքանչելի տարագներուն: Մէկ խօսքով, մեր նոր սերունդին ներկայացնելու մեր անցեալը՝ ՀԱՅՈՑ ՓԱՌՔԸ:

Պատմական հողերու վրայ ստեղծուած թագաւորութիւններ, տարբեր դարաշրջաններուն ապրող տոհմերու հայազգի գաւակներ, փառքի օրեր, կեանքով հարուստ ստեղծագործ օրեր, միաժամանակ յարձակումներու ու հարուածներու եկթակայ օրեր, հայութեան արիւնով շաղախուած պատմական ու բարգաւաճ հողերու վրայ...:

Ուրախ ենք, որ Հայ Օգնութեան Միութիւնը այսօր կու գայ մեր մտքերը թարմացնելու եւ յիշեցնելու, որ հայ ժողովուրդը ունեցած է փառապանծ օրեր, թագաւորական տոհմեր, բարգաւաճ մշակոյթ, ասանդական տարագներ, սովորութիւններ ու օրէնքներ:

Այս մտածումներով, անգամ մը եւս կ'ողջունենք ՀՕՄ-ի «Ռուրիսա» մասնաճիղի վարչութեան ու յանձնախումբին Տոհմիկ Օրուան այս նախաձեռնութիւնը, որ կը յիշեցնէ մեր իրաւունքներու ձեռքբերումն ու ապահովումը:

Եկէք, չմոռնանք մեր անցեալը, սակայն միայն անցեալով չհպարտանանք ու չափոտանք: Այլ ընդհակառակը, նայինք անցեալին, դաս առնենք անցեալէն ու վաղուան ՀԱՅՈՑ ՓԱՌՔԸ ստեղծելու մեր պայքարը շարունակենք եւ ըստ այնմ մեր ռազմավարութեամբ ու յաղթական քայլերով առաջ ընթանանք: Գալիք սերունդներու համար ամուր հիմք ստեղծենք:

Թող Աստուած օրինէ ձեր նուիրական աշխատանքը եւ անշահախնդիր ծառայութիւնը:

Օրհնութեամբ և սիրոյ ջերմ ողջոյնի՝
Աղօթարար

[Handwritten signature]

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի





ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ARMENIAN RELIEF SOCIETY OF CANADA (A.R.S.) Inc.
LA CROIX DE SECOURS ARMÉNIENNE DU CANADA (A.R.S.) Inc.

12 Նոյեմբեր, 2018

Պատուարժան Հայ Օգնության Միության
Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիղի Վարչություն
Եւ Տոհմիկ Օրուայ Յանձնախումբ

Ընկերական ամենաջերմ սիրոյ եւ գնահատանքի զգացումներով կ'ողջու-
նենք ձեզ բոլորդ, այս գեղեցիկ եւ նշանակալից հանգրուանին, Տոհմիկ Օրուայ
25-ամեակի տօնակատարութեան առթիւ, որ այս տարի նուիրուած է Հայաստանի
Ա. Հանրապետութեան 100-ամեակին եւ ձօնուած Հայոց Փառքը հանդիսացող
Թագաւորական Տոհմերուն:

Տարիներու եւ իրագործումներու հեռաւորութենէն դիտուած, սրտառուչ,
յուզականութեամբ կը յիշենք 25 տարիներու ընթացքին հետեւողականօրէն եւ
բծախնդրօրէն նախաձեռնուած Տոհմիկ Օրուայ նուիրուած տօնակատարու-
թիւնները, ուր ամէն ճիգ ու հնարաւորութիւն ի գործ դրուեցան, մեր
աւանդութիւնները կեանքի վերակոչելու, մեր պատմութիւնն ու ժառանգու-
թիւնները վերակենդանացնելու եւ զանոնք փոխանցելու մեր ապագայ սե-
րունդին: Եւ այս բոլորը շնորհիւ հայութեան հանդէպ տածած ձեր սիրոյն
ու հաւատարմութեան, շնորհիւ ձեր միասնականութեան եւ բարգաւաճելու
կամքին, ձեր անսահման նուիրումին, ուր կըրցաք ոչինչէն ստեղծել այսօրուան
շքեղ իրականութիւնը:

Չնայած ժամանակակից կեանքի գրաւիչ փոփոխութիւններուն, մշակոյթն
ու աւանդութիւնները կը հանդիսանան ազգապահպանման խարխախներէն
մին:

Սակայն ճիգն ու աշխատանքը պէտք չէ որ հոս դադրին, որովհետեւ մեր
երիտասարդ եւ մատղաշ սերունդը այս օտար ափերուն վրայ հայ պահելու
համար, մենք տակաւին մեծ պատասխանատւութիւն ունինք մեր ուսերուն
դրուած:

Արդ՝ յօբելեանական բարեպատեհ այս առթիւ, կը շնորհաւորենք Թո-
րոնթոյի Ռուբինա մասնաճիղի վարչութիւնն ու Տոհմիկ Օրուան յանձնա-
խումբը: Մեր ցանկութիւնն է, որ նոյն թափով եւ յարատեւութեամբ շարունակէք
ձեր ազգանուէր առաքելութիւնը:

Անսպառ կորովի եւ նորանոր յաջողութեանց լաւագոյն մաղթանքներով՝

Հայ Օգնության Միության
Գանատայի Շրջանային Վարչութիւն



Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, ԹՈՐՈՆՏՈ
SAINT MARY ARMENIAN APOSTOLIC CHURCH, TORONTO

1 Դեկտեմբեր, 2018

Յարգարժան՝
Վարչութիւն Հայ Օգնութեան Միութեան
«Ռուբինա» Մասնաճիւղի,

Թորոնթօ – Գանատա

25 տարիներու գեղեցեկ աւանդութիւնը կը շարունակուի, եւ այս անգամ Տոհմիկ Օրը կը ձօնուի՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին, ինչպէս նաեւ՝ Հայոց Թագաւորական Տոհմերուն:

Արդարեւ, 1918 Մայիս 28-ի Հայաստանի անկախացումը ուրիշ բան չէր, բայց եթէ՝ Հայոց կորսնցուցած պետականութեան վերականգնումը, որուն երազով ապրած էր Հայը ամբողջ վեց դարեր: Ուստի եւ՝ տեղին ու պատշաճ է մեր թագաւորական տոհմերը եւ մեր անկախացած Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս նոյն եւ մէկ ժողովուրդի պատմութեան ոսկէ օղակներ, իրարու զօդել եւ միասնաբար յիշատակել, Տոհմիկ Օրուան տօնական մթնոլորտին մէջ:

Միրելի ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի վարչականներ եւ զինուորեալ անդամներ, 25 տարուայ այս ջահը վառ պահած, Թորոնթոյի Հայ Գաղութիւնը կը պայծառացնէք մեր պատմութեան փառահեղ էջերով, որուն համար մեր աղօթքը կը բարձրացնենք առ բարձրեալն Աստուած, եւ ձեր աստուածահաճոյ ու ազգանուէր ծրագիրներուն համար յաջողութիւն կը հայցենք:

Թող Աստուած օրինէ ձեզ եւ ձեր ծառայութիւնը, որպէսզի հայահոժ մեր Գաղութիւնը դառնայ անելի պայծառ ու աշխոյժ, իսկ մեր «լոյսի ու յոյսի» Հայրենիքը ըլլայ առանէլ հզօր եւ բարգաւաճ:

Աղօթարար՝
Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան

Հովի՝ Հայ Առաքելական Ս. Աստուածածին Եկեղեցոյ
Թորոնթօ



**ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
«ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆ» ԿՈՄԻՏԷ
ԹՈՐՈՆԹՕ**

Հայ Օգնության Միության Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիղը, իր բարեսիրական եւ կրթական առաքելութիւններու շարքին, այս տարի եւս կը շարունակէ իր ասանդութիւնը, կազմակերպելով Տոհմիկ Օրուան ձեռնարկը:

Թորոնթոյի Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէն ինչպէս միշտ, այս անգամ եւս քաջալեր կը հանդիսանայ Հայ Օգնության Միության աշխատանքներուն ընդհանրապէս, ու Տոհմիկ Օրուան ազգավայել ու յատկանշական նախաձեռնութեանը:

Տոհմիկ Օրը ամէն տարի տարբեր շրջաններու նուիրուած, կը հետապնդէ երկու կարեւոր նպատակներ՝ սատարել հայ մշակոյթին, ծանօթացնելով այդ շրջանի հայութեան փառքերը մեր ժողովուրդին, եւ նպաստել Հայ Օգնության Միության բարեսիրական զանազան աշխատանքներուն:

Այս տարի Տոհմիկ Օրը նուիրուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան 100 ամեակին եւ ձօնուած Հայոց Արքայական տոհմերուն: Այսինքն, հայ ազգի պատմութեան կարեւորագոյն դրուագներուն: Հայոց Արքայական տոհմերն ու առաջին հանրապետութեան 100 ամեակը կը խորհրդանշեն հայոց պետականութեան անկախութեան, ու հայ ազգի գոյատեւման հիմքերը, որոնք անկասկած իրենց ներդրումը բերած են հայ ազգի շարունակականութեան պայքարին:

Առ այդ՝ Տոհմիկ Օրուայ սոյն ձեռնարկի առիթով, կու գանք շնորհաւորելու տասնեակ տարիներու ազգանուէր եւ մեծածաւալ գործունէութիւն տարած, հայապահպանման, հայ մշակոյթի տարածման, ու կարիքաւոր հայերու միշտ օգտակար դարձած Հայ Օգնության Միության Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիղը, եւ կը մաղթենք մեր քոյր միութեան, յարատեւ վերելք ու արեւի մեծ յաջողութիւններ:

Հ.Յ.Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէ
21 Սեպտեմբեր 2018



ՄԵՐ ԽՕՍՔԸ

Հայ ժողովուրդի վիշտի ու տառապանքի ընդերքէն ծնած եւ տասնամեակներ շարունակ պատնէշի վրայ գործող ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ շառաւիղէն վերընձիւողուած Թորոնթոյի «ՌՈՒԲԻՆԱ» մասնաճիւղը իր բարեսիրական բազմաբնոյթ ծրագիրներու կողքին հաւատալով, որ ազգը կը գոյատեւէ շնորհիւ իր մշակութային ինքնությունութեան եւ հաւատալով, որ ազգը մշակոյթ է եւ մշակոյթը ազգ՝ դարձաւ հաւատաւոր պահապանը եւ ջահակիրը հայ մշակոյթին եւ ինքնութեան: Ան կերտեց հայուն հոգեւոր հայրենիքը արտերկրի մէջ եւ տակաւին կը շարունակէ իր յաղթական երթը նպատակասլաց ճիգերով եւ յանձնառութեամբ:

ՀՕՄ-ուիին առաւել ասանդապաշտը, ազգանուէրն ու հայրենասէրը, ամբակոտ ապաստանի եւ բարոյական օճախի վերածած մեր ինքնութիւնը, մեր մշակոյթը պահպանած է անեղծ՝ պահելով անցեալի մեր ասանդութիւնները եւ կը շարունակէ իր առաքինի սուրբ գործը հոգեւոր շունչ դնելով իր բոլոր գործերուն մէջ: Ինչպէս Գարեգին Նժդէի ըսած է՝ “ Կնոջ ձեռքերուն մէջ պէտք է փնտռել ազգին ապագան”:

ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի տարիներու ասանդութիւն դարձած Տոհմիկ Օրերու ոսկեայ շղթային 25-րդ օղակը նուիրուած է Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100 ամեակին եւ ձօնուած Հայոց Արքայական Տոհմերուն՝ Ուրարտական, Արտաշէսեան, Արշակունեաց, Բագրատունեաց եւ Կիլիկիոյ:

Այս առթիւ հրատարակուած գիրքը յարգանքի եւ երախտագիտութեան տուրք մըն է մեր պանծալի պատմութեան, ամենադաժան եւ ամենավսեմ նեղ ուղիները ու բարձունքները նուաճած մեր անմահ հերոսներու յիշատակին, որոնք կերտեցին մեր Հայրենիքի Փառքը:


Կը հաւատանք, որ այս գիրքը շնորհակալութեամբ կ'ընդունուի բոլոր անոնց կողմէ, որոնք իրենց ընտանիքներէն ներս հայօրէն ապրելու եւ գոյատեւելու հաստատակամութեամբ եւ խոր գիտակցութեամբ իրենց զաւակներուն կը փոխանցեն ազգային մեր մշակոյթը:

Փառք ու պատիւ այն անձնուէր փաղանգին, որ յոյսի եւ լոյսի ջահակիրը կը մնայ ՀՕՄ-ի սրբազան առաքելութեան...

Փառք Հայուիի աննկուն կամքին եւ ծառայասէր ոգիին..

ՀՕՄ- ի “Ռուբինա”
Մասնաճիւղի Վարչութիւն

Թորոնթօ, 1 Դեկտեմբեր, 2018



Պատմահայր Մովսէս Խորենացի

**«Թէև մենք փոքր ածու ենք եւ շատ սահմանափակ թուով
եւ շատ անգամ օտար թագաւորներու տակ նուաճուած, բայց
եւ այնպէս մեր աշխարհի մէջ ալ քաջութեան շատ գործեր
կան գործուած՝ գրելու եւ յիշատակելու արժանի»:**

**«Դուն կը պատկանիս նախնական եւ քաջ ազգի,
արդիւնաւոր ոչ միայն խօսքի եւ պիտանի խոհականութեան
մէջ, այլեւ բազմաթիւ մեծամեծ փառաւոր գործերով, որոնք
մենք կը յիշատակենք այս պատմութեան ընթացքին»**

Պատմահայր՝ Մովսէս Խորենացի

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԳԻՐ

15 Հոկտեմբեր, 2018

Շատ ուրախալի է, որ խորապէս գիտակցելով Հայոց պատմութեան մէջ մեր ազնուականութեան կատարած դերակատարութիւնը, ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղը տարիներ շարունակ կազմակերպել է **Տոհմիկ Օրեր**, հրատարակել հայագիտական տարեգրքեր: Աւելի քան խորհրդանշական է, որ այդ բնագաւառում մեր ՀՕՄ-ուիիներն իրենց քառորդ դարեայ ազգանուէր գործունէութեան յոբելեանական ձեռնարկն այժմ նուիրել են մէկ այլ՝ համահայկական նշանակութեան յոբելեանի՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան փառապանծ 100-ամեակին:

Մեր ջերմ ու սրտագին մաղթանքները նրանց՝ դարակազմիկ այդ տօնի կապակցութեամբ իրականացրած ձեռնարկումներում:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

*Հայաստանի Գիտութիւնների ազգային ակադեմիայի
պարմութեան ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս*

ՆԱԽԱԲԱՆ

Արքայական Ազնուականական Տոհմերի Դերը Հայոց Պատմության Մէջ



ԱՇՈՏ ՄԵԼԻՔՆԵԱՆ

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի
պատմության ինստիտուտի տնօրէն, ակադեմիկոս

Պատմաբանների ու քաղաքագետների շրջանում մշտապէս ընթացել են վեճեր այն հարցի շուրջ, թէ պատմության կերտման գործում ասելի վճռական տեղ ու դեր ունեցել են ժողովրդական լայն զանգուածները, թէ՛ նրանց վերնախաւը՝ ի դէմս արքայական-ազնուականական տոհմերի եւ վերջիններիս ակնառու անհատների: Մարքսիստական պատմագրութիւնը նախապատուութիւնը մշտապէս տուել է ժողովրդական զանգուածներին: Սակայն որքան էլ ընդհանրական ձեռով ժողովուրդներն են եղել եղանակ ստեղծողներն իրենց տարեգրութեան մէջ, այնուամենայնիւ նրանց էլիտան՝ թագաւորական-ազնուականական խաւերն ու տոհմերն են ազգերին ուղղորդել պատմական ամենաբարդ ժամանակաշրջաններում, նրանք են թողել մնայուն հետք պատմութեան մէջ: Պատահական չէ, որ ժողովուրդների ու ազգերի իրական պատմութեան սկիզբ են համարուել միայն այն ժամանակները, երբ ասպարէզ են իջել պետականութիւնները, հետեւաբար եւ դրանց գլուխ կանգնած արքայական տոհմերը:

Զարմանալի չէ, որ Մովսէս Խորենացին, Հայոց երկրի վաղագոյն պատմութիւնն աւարտելուց յետոյ, մեծ ոգեւորութեամբ խօսելով առաջին հայ թագակիր, այն է՝ *պսակատր* արքայի՝ Սկայորդոու որդի Պարոյրի մասին, միաժամանակ ցաւ է ապրում, որ ինչնո՞ ինքն այդ ժամանակ աշխարհ չի եկել եւ չի դարձել այդ պատմական իրադարձութեան ականատեսը: «Եւ այժմ ահա զուարճացայց, -գրում է Պատմահայրը,- ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնուոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան: Վասն որոյ արժան է մեզ աստանաւոր մեծ գործ կատարել, եւ բագումն ասել առարկութիւնս ճառից»¹:

1 Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց, գիրք առաջին, Մատենագիրք Հայոց, Բ. հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1809:

Հայոց թագաւորական պատմութեան սկիզբն ընդունուած է համարել Հայոց բուն թուականը՝ Ք.ա. 2492 Օգոստոսի 11-ը, երբ Հայկ նահապետը Վանայ լճի ափին պարտութեան է մատնել բռնակալ Բելին: Այդ օրուանից դրուել է հայկական առաջին թագաւորական տոհմի՝ Հայկեանների կամ Հայկազունիների գահակալութեան սկիզբը:

Յատկանշական է, որ ըստ հայ պատմագիրների՝ յետագայի հայոց մի քանի արքայատներ սերուել են Հայկեաններից եւ իրենց ճիւղերով Ք.ա. III – I հազարամեակներում իշխել հայկական տարբեր պետական կազմաւորումներում՝ Արատտայում (Արարատի երկիր), Հայասայում, Էթիունիում, Դիաուխիում, Վանի թագաւորութիւնում (Բիայնիլի, Ուրարտու) եւ այլուր: Խեթական թագաւորների թողած արձանագրութիւնների շնորհիւ մեզ են հասել Բարձր Հայքի, Տայքի եւ Փոքր Հայքի տարածքում Ք.ա. XV-XIII գոյութիւն ունեցած Հայասա երկրի արքաների անունները՝ Հուկաննաս, Գարաննի եւ Անիա, որոնք միշտ մրցակից են եղել խեթերի երկրին, երբեմն էլ համարձակուել են յարձակուել Խեթական հզօր տէրութեան վրայ:

Հայկական լեռնաշխարհում Ք.ա. IX դարի առաջին կեսին ասպարէզ է իջել առաջին միասնական պետութիւնը՝ Վանի կամ Ուրարտական թագաւորութիւնը, որի հիմնադիր արքան եղել է Արամը (Արամէ): Վերջինիս անունից նրա յաջորդներին անուանել են նաեւ Արամեան-Հայկեաններ: Արամի յաջորդներից Մենուայի, Արգիշտի Ա.-ի եւ Սարդուր Բ.-ի օրօք երկիրը դարձել է տարածաշրջանի հզօրագոյն տէրութիւններից մէկը, որի սահմանները ձգուել են մինչեւ Միջերկրական ծով ու Պարսից ծոց:

Հայկեանների շառաւիղներից էին նաեւ Երուանդունիները: Արքայատոհմի հիմնադիրը Պարոյր Սկայորդու տոհմից սերուած Երուանդ Սակաւակեացն էր: Երուանդունիները Ք.ա. VI դարից գահակալել են Մեծ Հայքում, մշտական շփումներ են ունեցել ժամանակի հզօրագոյն տէրութեան՝ Աքեմենեան Պարսկաստանի հետ, ապա Ալեքսանդր Մակեդոնացու զօրքերի կողմից վերջինիս ջախջախումից յետոյ IV դարի վերջերից իշխել են նաեւ Փոքր Հայքում, Ծոփքում եւ Կոմմագենէում: Ի դէպ, Ծոփք-Կոմմագենէի արքաներ Սամուսի (Շամ) եւ նրա որդի Արշամի օրօք (Ք. ա. 260-220-ական թթ.) հատուել են առաջին հայկական դրամները:

Ք. ա. II դարի սկզբներից Երուանդունիներին յաջորդեց Արտաշէս Ա.-ն (Ք. ա. 189-160 թթ.), որը միայն մօր կողմից էր Երուանդական: Սակայն իր գահակալութիւնը օրինական ներկայացնելու համար իրեն կոչում էր *Արտաշէս՝ որդի Երուանդական*: Նա կարողացաւ մէկ պետութեան մէջ միաւորել Մեծ Հայքի նահանգների մեծ մասը, հիմնադրել մայրաքաղաք Արտաշատը, իրականացնել բազմաթիւ բարեփոխումներ, որոնց համար էլ պատմութեան մէջ մնաց *Արտաշէս Բարեպաշտ* անունով:

Արտաշիսեանների արքայատոհմն իր հզօրութեան գագաթնակէտին հասաւ Տիգրան Բ. Մեծի օրօք (Ք. ա. 95-55 թթ.): Հայկական տէրութեան սահմանները Կասպից ծովից հասան Միջերկրական ծով, Եգիպտոսի հիւ-

սիս-արեւելեան շրջաններ ու Պարսից ծոց: Պարտութեան մատնելով տարածաշրջանի ամենահզօր տէրութեանը՝ Պարթեւստանին՝ Տիգրան Մեծը ստիպեց պարթեւների թագաւորին յօգուտ իրեն հրաժարուելու *արքայից արքայ* պատուատիտղոսից: Ենթակայ երկրների հետ միասին Հայկական կայսրութեան տարածքն հասաւ շուրջ 3 մլն քառ. քմ.-ի: Մեզ են հասել Տիգրան Մեծի ու նրա յաջորդների՝ Արտաւազդ Բ.-ի, Արտաշէս Բ.-ի, Տիգրան Գ.-ի, Տիգրան Դ.-ի հատած բազմաթիւ դրամներ՝ Հայոց արքաների թագակիր դիմապատկերներով, թագաւորական ծիրանին հագած, *արքայից արքայ* կամ *մեծ արքայ* մակագրութիւններով: Արտաշիսեանների օրօք հելլենիստական մշակոյթը Հայաստանում հասաւ աննախադէպ բարձրութեան: Նրանց հիմնադրած Արտաշատ եւ Տիգրանակերտ քաղաքները վերածուեցին Արեւելքի խոշոր առևտրա-արհեստաւորական կենտրոնների:

Ք. յ. I դարի I կէսին պարթեւա-հռոմէական երկարատեւ մրցակցութիւնն աւարտուեց 66 թ., երբ Հայոց գահն անցաւ Պարթեւստանի Արշակունի արքայ Վաղարշ Ա.-ի եղբօրը՝ Տրդատ Ա.-ին: Արշակունիները, լինելով Պարթեւներ, ժամանակի ընթացքում ամուսնական կապեր հաստատեցին հայ ազնւրուականական տների հետ եւ սերտօրէն կապուելով Հայաստանի հետ, հայացան: Աւելին՝ նրանք գլխաւորեցին հայ ժողովրդի պայքարը՝ 226 թ. Պարսկաստանում Պարթեւ Արշակունիներին տապալած Սասանեանների դէմ:

Հայ Արշակունիների օրօք (66-428 թթ.) Մեծ Հայքի թագաւորութիւնում տեղի ունեցան դարակազմիկ իրադարձութիւններ. 301 թ. Տրդատ Գ. Մեծի եւ Գրիգոր Լուսաւորչի ջանքերով Հայաստանն աշխարհում առաջինը պետականօրէն ընդունեց քրիստոնէական կրօնը: Խոսքով Կոտակ (330-338) հիմնադրուեց Դուին մայրաքաղաքը: IV դարի երրորդ քառորդին Պարսից արքայ Շապուհ Երկարակեացի ոտնձգութիւնների դէմ շնորհալի թագաւորներ Արշակ Բ.-ի եւ Պապի առաջնորդած պայքարի շնորհիւ Մեծ Հայքը պահպանեց իր տարածքային ամբողջականութիւնը եւ շարունակեց մնալ տարածաշրջանի կարեւոր երկրների շարքում: Վոսմշապուհ Արշակունի արքայի (389-415) եւ Մահակ Պարթեւ կաթողիկոսի գործուն աջակցութեամբ 405 թ. հայ ժողովրդի հանճարեղ զուակ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը, դրուեցին հայալեզու հարուստ մատենագիտութեան հիմքերը: Հայաստանի 387 թ. պարսկահռոմէական բաժանումից եւ 428 թ. Արշակունիների հարստութեան անկումից յետոյ նրանց մի մասն անցաւ Բիւզանդիա: Ոմանք մտան ծառայութեան բիւզանդական արքունիք, իսկ Բարսեղ Ա.-ն 867 թ. հիմնադրեց կայսրութեան նշանաւոր Հայկական Մակեդոնական հարստութիւնը (867-1057):

Վերջապէս՝ Արշակունիները կատարելութեան հասցրեցին երկրի կառավարման համակարգը՝ բարելաւելով դեռ նախորդ ժամանակներից յայտնի գործակալութիւնների աշխատանքը: Մեզ հասած երկու կարեւոր փաստաթղթերի՝ «Գահնամակի» ու «Զօրանամակի» շնորհիւ մենք յստակ պատկերացում ենք կազմում Մեծ Հայքի թագաւորութեան պետական կառուցուածքի մասին: Պարզորոշ երեւում է, որ արքունիքի կողքին պետական կեանքում

կարելու դեր են ունեցել գործակալությունները, որոնցից իւրաքանչիւրը եղել է այս կամ այն նշանաւոր նախարարական տան ժառանգական պաշտօնը: Մպարապետութեան (գօրքերի հրամանատարութիւն) գործակալութիւնը պատկանել է քաջարի Մամիկոնեաններին, հազարապետութիւնը (տնտեսական հարցերի կազմակերպում)՝ Ամատունիներին, թագադիր ասպետութիւնը (թագաւորին թագադրողներ)՝ Բագրատունիներին, մաղխագութիւնը (արքունի թիկնագօրի պետեր)՝ Խորխոռունիներին եւ այլն: Սահմանակալ խոշոր նահանգների կառավարիչները, որոնք յայտնի էին բղեշխներ անունով, արքունիքում յատուկ բարձերի վրայ նստում էին անմիջապէս թագաւորի կողքին: Տաս հազար եւ ասելի գօրք ունեցող նախարարներին կոչում էին բիրատրք, միւսներին՝ հազարատրք, հարիւրատրք եւ հիսնատրք: Ուշագրաւ է, որ 428 թ. Արշակունիների հարստութեան անկումից յետոյ պետականութիւնը չկործանուեց, այլ անցաւ նախարարական տներին: Այդ մասին պատմիչ Եղիշէն գրում է, որ երբ պարսից արքունիքը «...իբրեւ գնա (Արշակունեաց վերջին արքայ Արտաշէսին -Ա. Մ.) եւս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ եւ գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրումին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»²:

Պատահական չէ, որ մինչեւ IX դարի երկրորդ կէտը շնորհիւ պարսիկների, բիզանդացիների ու արաբների դէմ նախարարական տների (Արծրունիներ, Ռշտունիներ, Մամիկոնեաններ, Բագրատունիներ) մղած պայքարի, հնարատր եղաւ տարբեր դրսետրումներով պահպանել հայոց պետականութիւնը, իսկ Բագրատունիներին՝ 885 թ. վերականգնել կորցրած թագաւորութիւնը:

IX-XI դարերում Հայաստանում Անիի կենտրոնական պետութեան հարեւանութեամբ ստեղծուեցին մի քանի այլ թագաւորութիւններ: Արդէն 908 թ. Վանայ լճի աւազանում ձեւատրուեց Վասպուրականի Արծրունիների թագաւորութիւնը (908-1021): X դարի երկրորդ կէտին Բագրատունիները ստեղծեցին ինքնուրոյն թագաւորութիւններ նաեւ Կարսում (Վանանդի, 963-1064) եւ Լոռիում (Տաշիր-Չորագետի, 978-1118), իսկ Սիւնիները՝ Սիւնիքում (Կապանի, Բաղաց, 987-1170): Գագիկ Արծրունի (908-937) Աղթամար կղզու վրայ կառուցեց հայ միջնադարեան ճարտարապետութեան գլուխգործոց Սբ. Խաչ եկեղեցին, Աշոտ Գ. (Ողորմած) Բագրատունի (953-977) մայրաքաղաքը Կարսից տեղափոխեց Անի, այն կառուցապատեց, իսկ Չորագետի հովտում նրա կիներ՝ Խոսրովանոյ թագուհին հիմնադրեց Հաղպատի եւ Սանահինի վանական շքեղ համալիրները: Անիի թագաւորութիւնը հզօրացաւ յատկապէս Գագիկ Ա.-ի օրօք. Անին դարձաւ ժամանակի գեղեցկագոյն եւ խոշոր քաղաքներից մէկը, իր բազմաթիւ հոգեւոր կառոյցների պատճառով ստացաւ «հազար ու մի եկեղեցիների քաղաք» անունը: Տաշիրի Բագրատունիները, որոնք յայտնի դարձան Կիւրիկեաններ անունով, կարողացան նաեւ սեփական

2 Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957, էջ 6:

դրամ հատել: Հայ ազնուականական տներից շատերը շարունակեցին իշխել Տայքում, Արցախում եւ այլուր՝ ունենալով ինքնավար կարգավիճակ: Հայ արքայական ու իշխանական տների հովանաւորութեամբ այդ դարաշրջանում աննախադէպ զարգացում ապրեց հայ մշակոյթը:

XII դ. վերջին Միւնիքի Բաղաբերդ ամրոցի գրաւումով մայր հայրենիքում կործանուեց հայկական վերջին թագաւորութիւնը: Սակայն պետականութիւնը շարունակեց գոյատեւել Հիւսիսային Հայաստանում՝ Զաքարեանների, Վահրամեանների, Միւնիքում՝ Օրբելեանների, Արցախում՝ Առանշահիկների, Դովեանների ու Հասան-Ջալալեանների եւ կիսանկախ այլ իշխանութիւնների կարգավիճակով:

Անիի ու Կարսի թագաւորութիւնների կործանումից եւ սելճուկ-թուրքերի արշաւանքներից յետոյ Հայաստանից զանգուածային արտագաղթ սկսուեց դէպի Վրաստան, Հիւսիսային Կովկաս, Դրիւմ եւ յատկապէս՝ Կիլիկիա: Արտագաղթողների մէջ կային նաեւ թագաւորական ու ազնուականական տների ներկայացուցիչներ: Պետականութեան զգացողութիւնը տրամաբանօրէն բերեց օտար ափերում եւս պետութիւն ստեղծելու անհրաժեշտութեանը:

XI դ. վերջին Միջերկրական ծովի հիւսիս-արեւելեան ափամերձ շրջաններում ստեղծուեցին մի քանի հայկական իշխանութիւններ, որոնցից ամենակենսունակը եղաւ Ռուբէն իշխանի հիմնադրած Կիլիկեան պետութիւնը: Ռուբէնը դարձաւ հերթական հայկական ազնուականական տոհմի՝ Ռուբինեանների հիմնադիրը: Վերջիններս մէկ դարի ընթացքում ընդարձակեցին իրենց տիրոյթները, Միւս բերդաքաղաքը դարձրեցին նստավայր եւ Լեւոն Մեծագործի օրօք (1187-1219) երկիրը հռչակեցին թագաւորութիւն: 1198 թ. յունուարի 6-ին՝ Սբ. Ծննդեան օրը Տարսոն քաղաքում, օտարերկրեայ հիւրերի ներկայութեամբ, մեծ հանդիսաւորութեամբ կաթողիկոս Գրիգոր Զ. Ապիրատը Լեւոնին օժեց Հայոց թագաւոր: Այդ իրադարձութիւնը ցնծութեամբ ընդունուեց համայն հայութեան կողմից:

1226 թ. Ռուբինեաններին Հայոց գահի վրայ փոխարինեցին Հեթումեանները: Հեթում Ա.-ի գահակալութեան շրջանում (1226-1270) Կիլիկեան թագաւորութիւնը, յայտնուելով աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում, 1256 թ. դաշինք կնքեց աշխարհակալ մոնղոլական տէրութեան հետ եւ պահպանեց իր ինքնիշխանութիւնն ու տարածաշրջանի ազդեցիկ երկրի դիրքը: XIV դարում՝ մինչեւ 1375 թ. Կիլիկեան Հայաստանի անկումը, երկրում գահակալեցին Լուսինեան արքայատոհմի ներկայացուցիչները: Վերջին թագաւոր Լեւոն Ե.-ն (1373-1375), որին մայրաքաղաք Միսի գրաւումից յետոյ Եգիպտոսի մամլուքները գերի էին տարել, երոպական տիրակալների ջանքերով փրկագնով ազատուեց ու տեղափոխուեց Երոպա՝ գործունէութիւնը շարունակելով Իսպանիայում եւ Ֆրանսիայում: Լեւոն Ե.-ն, որին վիճակուած էր լինել Հայոց վերջին արքան, իր յաւերժական հանգիստը գտաւ Փարիզի հիւսիսում գտնուող Սեն Դենի տաճարում՝ Ֆրանսիական արքայական նշանաւոր տոհմերի աճիւնների կողքին:

Թագաւորութիւնը կորցնելուց յետոյ տարբեր ժամանակներում հայ ազգային գործիչները քայլեր կատարեցին այն վերականգնելու ուղղութեամբ: Նման ջանքերը երբեմն արդիւնք էին տալիս: Այսպէս՝ 1465 թ. Աղթամարում Զաքարիա կաթողիկոսն իր եղբօրորդուն՝ Սմբատ Մեֆեդիդեանին թագադրեց: Ցաւօք, Սմբատի իշխանութիւնը տարածուեց միայն Աղթամարի ու Վասպուրականի եւս մի քանի շրջանների վրայ եւ գոյութիւն ունեցաւ մինչեւ 1471 թ.: Այդուհանդերձ, ինչպէս ճիշտ նկատել է պատմաբան Ա. Ութուջեանը, այդ իրադարձութիւնը մեծ տպաւորություն թողեց հայութեան շրջանում, քանի որ «Սմբատ Մեֆեդիդեանը մի կարճ պահ ժամանակակիցներին յիշեցրեց Վասպուրականի, ինչու չէ՝ նաեւ բովանդակ Հայաստանի, անցեալի փառքերը»³:

Ճիշտ է՝ այդուհետ թագաւորութիւնը վերականգնել չյաջողուեց, սակայն պետականութիւնը զանազան դրսեւորումներով (իշխանապետութիւններ, կիսանկախ լեռնային համայնքներ եւ այլն) գոյատեւեց Մոկսում, Շատախում, Համէլէում, Սասունում, Զէյթունում, Արցախում, Սիւնիքում եւ այլուր: Յիշատակութեան արժանի են յատկապէս Արցախի, Սիւնիքի, Գեղարքունիքի, Արարատեան երկրի մելիքութիւնները, որոնց առաջնորդ - մելիքներն օժտուած էին ռազմա-քաղաքական ու տնտեսական իշխանութեամբ: Պատահական չէ, որ արաբերէն *մելիք-մլէք* նշանակում է թագաւոր: Կարելորելով հայկական մելիքութիւնների դերը տարածաշրջանում թուրքական ոտնձգութիւնների դէմ պայքարի մէջ՝ Պարսից շահերն իրենց նպաստն էին բերում այդ կազմաւորումների ամրապնդման գործին⁴: Զարմանալի չէ, որ Թահմասպ Բ. շահը 1724 թ. պաշտօնապէս ճանաչեց Սիւնիքում Դաւիթ-Բէկի իշխանութիւնը, իսկ Նադիր շահը 1736 թ. Արցախի հինգ իշխանութիւններից ստեղծեց մի ազդեցիկ պետական կազմաւորում՝ Խսամասյի (խամսա արաբ. նշանակում է՝ հինգ) մելիքութիւնները եւ հայ մելիքներին շնորհեց նոր արտօնութիւններ: Հայկական մելիքութիւններից շատերը պահպանուեցին մինչեւ XIX դ. սկիզբը՝ Ռուսական կայսրութեան կողմից Արեւելեան Հայաստանի գրաւումը:

Հայկական թագաւորական ու իշխանական տների պատմութիւնը, որ դարեր շարունակ կազմել է Հայոց պատմութեան ողնաշարը, բազմաթիւ սերունդների դաստիարակել է հայրենասիրական շնչով, անսահման հաւատ ներշնչել ապագայի նկատմամբ: Հենց այդ համոզումն ու հաւատն էին, որ սերնդէ սերունդ անցնելով, 1918 թ. մայիսի 28-ին կեանքի կոչեցին մեր նորագոյն դարաշրջանի պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը:

3 Ութուջեան Աղանի, Հայկական պետականութեան վերականգնման փորձ ԺԵ. դարի կէսերին, Հայկագեան հայագիտական հանդէս, հ. ԺԹ., Պէյրութ, 1999, էջ 107-122:

4 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթապանակ 1 գ, վաւերագիր 1032: